

Ընդունելություն Լիբանանի դեսպանատանը

25.11.2013



2013 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը Հայաստանի Հանրապետությունում Լիբանանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան նորին գերազանցություն պարոն Ժան Մաքարոնի հրավերով Երևանի Ռոյալ Տուլիպ հյուրանոցում մասնակցել է Լիբանանի անկախության 70-րդ տարեդարձին նվիրված ընդունելությանը: Միջոցառմանը մասնակցում էր նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդյանը, բազմաթիվ երկրների դեսպաններ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ: